## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արդվի համայնք հասցե գ. Արդվի 3փողոց 1 շենք
հեռախոս 077-44-14-30

ՀՀ Լոռու մարզպետ՝
Պ-ն Ա. Նալբանդյանին

<<21>> հոկտեմբերի 2016թվականի № 90

Հարգելի պարոն մարզպետ.

Կից Ձեզ ենք ներկայացնում Արդվի համայնքի ավագանու № 25-Ա որոշումը:

Առդ. իր՝ 3 թերթ:

Արդվի համայնքի ղեկավար՝ Ս. Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԴՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արդվի համայնք, հասցե գ. Արդվի 3փողոց, 1շենք
Հեռախոս՝ 077-44-14-30

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14» հոկտեմբերի 2016 թվականի N 25 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 27 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Արդվի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 33-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Արդվի համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Վարոսյան Վաղինակ | | | |
| Վերանյան Սուրեն Վ. | | | |
| Վերանյան Սուրեն Ս. | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Կիրակոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Արդվի համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 25-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն ,անուն,հայրանուն | Գումարի չափը |
|---|---|---|
| 1. | Հովասափյան Հերմինե, | 30.000դրամ |
| 2. | Վաhրամյան Ժենյա | 30.000դրամ |

Աշխատակազմի քարտուղար Մ. Շահվերդյան